



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՔՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքրի համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, Գ.Աքրի, 4-րդ փ., 1-ին շ., Հեռ.
(093)308083 , aqorigyxapetaran@mail.ru

N 223
22 դեկտեմբեր 2016թ.

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Աքրի համայնքի ավագանու թիվ 58-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՐԱՀԱՏ ՍԻՄՈՆՅԱՆ

Կապ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՔՐՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքրրի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Աքրրի, (093)308083, aqorigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 58-Ն

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՔՐՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ _ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով.

Աքրրի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Աքրրի համայնքի 2017-2021թթ սոցիալ- տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԹԱԹՈՅԱՆ ՎԱՐԻՆԱԿ
3. ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

(Handwritten signatures)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՀԱՏ ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2017 - 2021ԹԹ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՔՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ

20.12.2016թ 58-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՄԻՍՈՆՅԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Ինչ է հնգամյա ծրագիրը, համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն
3. Համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը
4. Համայնքի հողային հաշվեկշիռը
5. Գյուղատնտեսություն և անասնապահություն
6. Համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը
7. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
8. Համայնքի ծրագրերի ցանկի կազմում , առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում
9. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Ներածություն

Լոռու մարզի Աքորի համայնքի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագիրը /այսուհետ ՀԶՀԾ/ մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015թ դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181 հ-ի, ՏԻՄ –երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են 5 տարի ժամկետով և 210-րդ հ-ի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017թ-ի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյան այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազարությունները նրա գործունեության բնագավառներում /ոլորտներում/, ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները: ՀԶՀԾն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- . համայնքի ֆինանսական կարողություն
- . համայնքի բնակչության թվաքանակը
- . համայնքում առկա վտանգները, ռիսկերը

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

1. Համայնքի իրավիճակի գնահատումը:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գյուղը ավելի հին է, քան ենթադրում է, որի վկայություն է գյուղի տարածքում գտնվող << Ագեղցի>> եկեղեցին , որը կառուցվել է 5-6-րդ դարում և նույն տարածքի գերեզմանատունը:

Գյուղը գտնվում է Լավվար սարի հարավ - արևելյան մասում` Ալավերդի քաղաքից 5կմ հեռավորության վրա: Գյուղը սահմանակից է Վրաստանին: Բնակչության թիվը ըստ գրանցումների կազմում է 2788 մարդ: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1050-1100մ բարձրության վրա:

2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

Համայնքի բնակչությունը կազմում է 2788 մարդ, այդ թվում` արական` 1489 մարդ, իգական`

1299 մարդ:

Բնակչության սեռատարիքային կազմը հետևյալն է.

1. Երեխաներ 0-4 տ	135
2. Դպրոցականներ	253
3. 16-62տ	2400
4. Թոշակառուներ	372
5. Հաշմանդամներ	131
6. Աշխատունակներ	1500

Համայնքը ունի 850 տնային տնտեսություն, որոնցից 124-ը նպաստառու է:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 652 սեփական առանձնատուն և 37 վագոն- տնակ: Կան բազմաթիվ կիսակառույց և վթարային տներ 1988թ. երկրաշարժից հետո , որոնք բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակի պատճառով չեն վերանորոգվել:

Կրթություն

Համայնքը ունի միջնակարգ դպրոց 7 մասնաշենքով , որտեղ սովորում են 253 աշակերտ : Ներկայումս դպրոցի շենքը ենթակա է հիմնանորոգման: Համայնքապետարանի ենթակայության տակ գյուղում գործում է երաժշտական դպրոց` 22 աշակերտով և մանկապարտեզ` 56 սանով: 2004թ. <<Փրկեցեք երեխաներին >> կազմակերպության միջոցներով վերը նշված կազմակերպությունների շենքը ենթարկվել է հիմնանորոգման:

Մշակույթ

Համայնքը ունի մշակույթի կենտրոն,որտեղ տեղավորված է գրադարան և դահլիճ 300 նստատեղերով, սակայն ենթակա է հիմնանորոգման: Մշակույթի աշխատողների թիվը` 5 աշխատող:

Առողջապահություն

Գյուղում գործում է առողջության առաջնային պահպանման կենտրոն , որը սպասարկում է Աքորի և Կաճաճկուտ համայնքներին: Հազեցած է բուժ-սպասարկման համար անհրաժեշտ սարքավորումներով և հիմնանորոգված է:

3.Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքի ինքնակառավարումը իրականացնում է ավագանին՝ կազմված 7անձից և համայնքապետը:

Համայնքապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Համայնքապետի տեղակալ	-1դրույք
Աշխատակազմի քարտուղար	-1դրույք
Գլխավոր մասնագետ	-1դրույք
Առաջատար մասնագետ	-1դրույք
1-ին կարգի մասնագետ	-1դրույք
1-ին կարգի մասնագետ	-1դրույք
1-ին կարգի մասնագետ	-1դրույք
2-րդ կարգի մասնագետ	-1դրույք
Հավաքարար	-1դրույք
Վարորդ	-1դրույք
Բանվոր	-1դրույք

4. Հողային հաշվեկշիռը

Համայնքի վարչական տարածք	-5394 հա
Վարելահողեր	-222հա
Խոտհարք	-191հա
Տնամերձ հողամասեր	-107հա
Արոտավայր և քարքարոտ	-3356հա
Մեփականաշնորհված	-244հա
Մեկ հողաբաժին	-0.5հա

5.Գյուղատնտեսություն և անասնապահություն

Ազգաբնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, որի համար համեմատաբար

բարենպաստ պայմաններ կան: Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ

հողամասերում, կաթի վերամշակումը իրականացվում է տներում: Կաթնամթերքը վաճառվում է

Համայնքի անհատական և ֆերմային տնտեսություններում պահվում են հետևյալ անասունները՝

Խոշոր եղջերավոր անասուններ 304

Մանր եղջերավոր անասուններ 394

Խոզեր 340

Չիեր 49

6. Հիմնական ցուցանիշների գնահատում Տրանսպորտային միջոցներ

Համայնքում առկա է 2 միավոր գյուղտեխնիկա / անվավոր/ և 1 միավոր թրթուրավոր: Ալավերդի քաղաքի հետ կապն իրականացվում է միկրոավտոբուսով 150 դրամ արժեքով և տաքսիների միջոցով 200 դրամ արժեքով:

Ճանապարհ

Համայնքը Ալավերդուն է միացված 5կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով , սակայն այն գտնվում է ոչ բարելավ վիճակում : Համայնքը ունի 50 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհներ և գյուղամիջյան 15կմ երկարությամբ ճանապարհներ, որոնք մասնակի վերանորոգման կարիք ունեն:

Ջուր

Համայնքը գտնվում է Ալավերդի քաղաքին սնուցող ջրագծի մոտ, Համայնքը ունի ներհամայնքային ոռոգման ջրագիծ սակայն երկար տարիներ այն չի գործել: 2003թ համայնքում կառուցվել է << Չափրելաձոր -Աքորի >> ոռոգման ջրատարը , 2004թ մասնակի վերանորոգվել է ներքին ցանցը: 2006-2008թթ կառուցվել է 2500 գծմ ոռոգման ջրագիծ: 2009թ նույնպես 690գծմ նոր ջրագիծ է անցկացվել:

Գազ

2007թ գյուղական տարածքների զարգացման ծրագրով գազաֆիկացվել է գյուղի 60 տոկոսը , ենթակա է գազաֆիկացման ևս 40 տոկոսը, որը կազմում է 3կմ:

7. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Ռազմավարություն

Բարեփոխումներ անցկացնելու նպատակով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական , մշակութային և հանգստի պայմանները , գյուղը դարձնել գեղեցիկ , բարեկարգ և ամենակիրթ բնակավայրերից մեկը: Նպատակ ունենք համայնքը դարձնել զբոսաշրջիկների համար ավելի հետաքրքրելի վայր, հաշվի առնելով համայնքում առկա պատմաճարտարապետական հուշարձանները /Բգավորի, Սեդվու և համայնքի Մուրք Գևորգ եկեղեցիները/:

Բարեփոխումներ կատարելով , նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Զարգացնել անասնապահությունը համայնքում.
2. Զարգացնել հողագործությունը և այգեգործությունը ձեռք բերելով համայնքի համար անհրաժեշտ գյուղտեխնիկա:
3. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը, հանգիստը աշխատանքից ազատ ժամանակ:
4. Համայնքը ապահովել շրջօրյա խմելու ջրով , կառուցել խմելու ջրի մատակարարման ներքին ցանց և կանխել սուր վարակիչ հիվանդությունները:
5. Վերանորոգել և բարեկարգել պատմաճարտարապետական հուշարձանների շրջակայքը` զբոսաշրջության զարգացման համար:
6. Կազմակերպել աղբահանությունը:
7. Կազմակերպել լուսավորության անցկացումը:
8. Ոռոգման ցանցի շահագործման բարելավում:

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում :

8. ՀԱՄԱՅՆՔԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1.

Վարչական շենքի հիմնանորոգում

Ներածություն

Համայնքապետարանի շենքը կառուցվել է 1972թ : Կապիտալ վերանորոգում չի կատարվել, ենթակա է հիմնանորոգման :

Պատասխանատու համայնքի ղեկավար

Խնդիրները

Ծրագրի իրականացման համար բյուջեից անհրաժեշտ է տրամադրել մոտ 5 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2.

Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում

Ներածություն

Ներհամայնքային ճանապարհները ոչ բարվոք վիճակում են: Անձրևների ժամանակ դառնում են անանցանելի: Հարկավոր է հրատապ ասֆալտապատել 3000քմ ճանապարհ :

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային , համայնքին հատկացվող բնապահպանական , պետական և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջամտությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 46 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3.

Մանկապարտեզի շենքի վերանորոգում

Ներածություն

Մանկապարտեզի շենքը կառուցվել է 1961 թ , 2013-2015թվականներին վերանորոգվել է մանկապարտեզի տանիքը, սանհանգույցները, խոհանոցը և փոխվել են լուսամուտները: Այժմ անհրաժեշտություն կա կատարել ներսի վերանորոգման աշխատանքներ:

Խնդիրները

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքի տրամադրվող բնապահպանական, միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 4մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4.

Համայնքային կենտրոնի հանդիսությունների սրահի վերանորոգում Ներածություն

Համայնքային կենտրոնի շենքը մասնակի վերանորոգման կարիք ունի: Այն ծառայում է ամբողջ համայնքին, բնակչությանը ուրախությունների ու տխրությունների արարողությունների անցկացման համար:

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դոնոր կազմակերպությունների և համայնքապետարանի համատեղ ֆինանսական ներդրում, անհրաժեշտ է շուրջ 7 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 5.

Աքորի - Ալավերդի ճանապարհների վերանորոգում

Ներածություն

Աքորի - Ալավերդի ճանապարհը եղել է ասֆալտապատ: Ներկայիս վիճակը բավարար է; Կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, փոսային նորոգումներ: Անհրաժեշտ է շարունակական կատարել փոսային նորոգումներ:

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային, պետական և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջամտությունը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 5 մլն դրամ, որի 10 տոկոս ներդրումը համայնքը պատրաստ է կատարել համայնքային բյուջեից:

ԾՐԱԳԻՐ 6.

Չափրելաձոր-Աքորի ոռոգման ջրատարի նորոգում

Ներածություն

Համայնքը ունի ներհամայնքային ոռոգման ջրագիծ սակայն երկար տարիներ այն չի գործել: 2003թ համայնքում կառուցվել է << Չափրելաձոր -Աքորի >> ոռոգման ջրատարը , 2004թ մասնակի վերանորոգվել է ներքին ցանցը: 2006-2008թթ կառուցվել է 2500 գծմ ոռոգման ջրագիծ: 2009թ 690գծմ

5 500 հազ. դրամի չափով նոր ջրագիծ է անցկացվել և 1100 հազ դրամի չափով վերանորոգման աշխատանքներ է կատարվել:

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 4մլն դրամ, անհրաժեշտ է ներգրավել համայնքային , համայնքի տրամադրվող բնապահպանական, պետական և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջամտությունը:

ԾՐԱԳԻՐ 7.

Գյուղտեխնիկայի ձեռք բերում

Ներածություն

Աքորի համայնքը ունի 222հա վարելահող , 107 հա տնամերձ հողամաս, սակայն համայնքում չկա գյուղտեխնիկա գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:

Խնդիրը

Գյուղտեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ է 5 մլն դրամ գումար, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը:

ԾՐԱԳԻՐ 8.

ԴՊՐՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՅԹԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ

Ներածություն

Համայնքի դպրոց տանող ճանապարհի մայթը ամբողջությամբ գտնվում է անմխիթար վիճակում,որի պատճառով երեխաները ստիպված են դուրս գալ մայթից:Որը խանգարում է երթևեկության բնականոն ընթացքը:

Խնդիրները

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային, համայնքին տրամադրվող բնապահպանական, պետական և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջամտությունը:

Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ է 15 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 9.

Մշակույթի տան շենքի վերանորոգում

Ներածություն

Մշակույթի տան շենքը կառուցվել է անցած դարի 70-ական թվականներին, այնտեղ է տեղավորված գրադարանը: Երկար տարիների շահագործումից այն ենթակա է հիմնանորոգման:

Պատասխանատու համայնքի ղեկավար

Խնդիրները

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային, միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցումը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 10 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 10.

Հակակարկտային կայանի ձեռքբերում

Ներածություն

Տարերային աղետների հետևանքով վնասվում է մշակվող ցանքատարածությունները և բերքը, որի հետևանքով համայնքի բերքտվության տոկոսը ցածրանում է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ձեռք բերել հակակարկտային կայան:

Ծրագրի իրականացման նպատակներն են.

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքի տրամադրվող բնապահպանական , միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 4մլն դրամ :

Պատասխանատու համայնքի ղեկավար

Խնդիրները

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 4մլն դրամ;

ԾՐԱԳԻՐ 11.

Սար տանող ճանապարհների նորոգում

Ներածություն

Սար տանող ճանապարհները անմխիթար վիճակում են, ավտոմեքանիկաներից խուսափելու, բնակիչների հնձված խոտերը սարից գյուղ տեղափոխելու, առանց դժվարությունների սարաքոչելու համար անհրաժեշտ է նորոգել սարի ճանապարհները:

Խնդիրը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ 950 000 դրամ,որը կտրամադրվի համայնքի բյուջեից:

ԾՐԱԳԻՐ 12.

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԲԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ և ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ներածություն

Մանկապարտեզի բակը գտնվում է անմխիթար վիճակում :Անհրաժեշտ է կատարել բակի բարեկարգման աշխատանքներ և կառուցել մանկական խաղահրապարակ:

Խնդիրները

Անհրաժեշտ ֆինանսական միջոցները , ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքային և միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: Ծրագիրը իրականացնել համար անհրաժեշտ է 3մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 13.
ՋՐԱՏԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ներածություն

Համայնքային ասֆալտապատված փողոցները պահպանելու համար անհրաժեշտ է կառուցել ջրատարներ մոտ 1.5կմ:

Խնդիրները

Անհրաժեշտ ֆինանսական միջոցները , ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել համայնքին տրամադրվող բնապահպանական ,միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությունը: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է Յմլն դրամ:

9.Պատասխանատու համայնքի ղեկավար

Համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը

Համայնքում ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը : Լոռու մարզի Արթուրի համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

Եկամուտների տեսակ	2012 փաստացի	2013 փաստացի	2014 փաստացի	2015 փաստացի	2016 փաստացի
Եկամուտներ ընդամենը	44379.1	46513.5	49339.6	55024.9	57360.3
Հարկային եկամուտ	2163.4	2358.9	3069.0	3445.4	3421.3
Հողի հարկ	1432.5	1388.7	1395.3	1507.7	1450.2
Գույքի հարկ	730.9	970.2	1673.7	1937.2	1971.1
Տուրքեր	390.0	390.0	386.0	354.0	360.0
Պետական	-	-	-	-	-
Տեղական	390.0	390.0	386.0	354.0	360.0
Ոչ հարկային եկամուտ	1958.4	1762.7	1451.8	1579.0	1200.0
Դոտացիա	39867.3	42001.9	44432.8	49646.5	52379.0

